ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Մայիսի 3-5-ին ս. Էջմիածնում, մասնակցութեամբ 72 ձայնների, կատարուեցին կաթողիկոսական ընտրութիւնները։ Բոլոր 72 ձայներով ընտրուեց կաթողիկոսական առաջին թեկնածու դերապատիւ Մկրտիչ արքեպիսկոպոս Խրիմեան, կոչուած Հայրիկ, և որպէս երկրորդ թեկնածու՝ սրբազան Մատթէոս եպիսկոպոս Իզմիրլեան։ «Մուրճ» ամսագիրը միանում է ազգի ընդհանրութեան հետ և լիապէս բաժանում ընդհանուրի բերկրանքը Խրիմեան Հայրիկի միաձայն ընտրութեան համար։ Ուրախ ենք, որ «Մուրճ»-ը առանց որ և է տատանման առաջարկել էր որպէս կաթողիկոս ամենայն հայոց այն մեծ մարդուն, որը ընտրութիւնների հանդիսաւոր օրը ազգի բոլոր հոգևորական և աշխարհական ներկայացուցիչների միաձայն հաւանութիւնը գտաւ։ Մենք չենք կասկածում որ «Մուրճ»-ը որ և է չափով աջակցել է կաթողիկոսական խնդրի այդ յաջող ելքին. դորա մէջ մխիթարութիւն գտնելով, մեր մէջ զօրանում է վստահութիւնը որ նաև ապագայում՝ ազգի համար ծանրակշիռ խնդիրներում՝ մենք մեր ազգին կարող կը լինենք խելացի խորհուրդներով օգնել, արժանանալով ընթերցող հասարակութեան կողմից աւելի ևս ընդարձակ հաւատի դէպի մեզ։

ԽՄԲ.